

Հավելված 1
 ՀՀ Նախագահի
 2016թ. փետրվարի 10 -ի
 ՆՀ- 170 -Ա հրամանագրի

Ց Ա Ն Կ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՆՎԱՆԱԿԱՆՈՐԵՆ
 ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՄԱՆ, ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՄ ԼՐԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ
 ՕՐԵՆՔՆԵՐԻ

Հ.	Սահմանադրու- թյան փոփոխություն- ների հոդվածը	Օրենքի անվանումը	Օրենքի նախագծի մշակմանը և ներկայացմանը մասնակցող պատասխանատու մարմինները	Օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու վերջնաժամ- կետը
1.	210-րդ հոդվածի 1-ին մաս	Ընտրական օրենսգիրք (սահմանադրական օրենք)	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ)	2016թ. մարտի 1
2.	210-րդ հոդվածի 2-րդ մաս	Ազգային ժողովի կանոնակարգ (սահմանադրական օրենք)	ՀՀ Ազգային ժողովի աշխատանքային խումբ (համաձայնությամբ), ՀՀ արդարադատության նախարարություն	2016թ. նոյեմբերի 1
3.	210-րդ հոդվածի 2-րդ մաս	Կուսակցությունների մասին օրենք (սահմանադրական օրենք)	ՀՀ արդարադատության նախարարություն	2016թ. հոկտեմբերի 1
4.	210-րդ հոդվածի 2-րդ մաս	Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենք (սահմանադրական օրենք)	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)	2016թ. մայիսի 1
5.	210-րդ հոդվածի 3-րդ մաս	Դատական օրենսգիրք (սահմանադրական օրենք)	ՀՀ արդարադատության նախարարություն	2017թ. մարտի 1
6.	210-րդ հոդվածի 3-րդ մաս	Սահմանադրական դատարանի մասին օրենք (սահմանադրական օրենք)	ՀՀ արդարադատության նախարարություն	2017թ. փետրվարի 1

7.	210-րդ հոդվածի 3-րդ մաս	Հանրաքվեի մասին օրենք (սահմանադրական օրենք)	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ)	2017թ. սեպտեմբերի 1
8.	210-րդ հոդվածի 4-րդ մաս	Տեղական ինքնակառավարման մարմինների մասին օրենք	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	2016թ. սեպտեմբերի 1
9.	210-րդ հոդվածի 5-րդ մաս	Դատախազության մասին օրենք	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատախազություն (համաձայնությամբ)	2017թ. ապրիլի 1
10.	210-րդ հոդվածի 5-րդ մաս	Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենք	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով (համաձայնությամբ)	2017թ. հունիսի 1
11.	210-րդ հոդվածի 5-րդ մաս	Հաշվեքննիչ պալատի մասին օրենք	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ վերահսկիչ պալատ (համաձայնությամբ)	2017թ. հոկտեմբերի 1
12.	210-րդ հոդվածի 5-րդ մաս	Կենտրոնական բանկի մասին օրենք	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2017թ. մայիսի 1

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 2
 ՀՀ Նախագահի
 2016թ. փետրվարի 10 -ի
 ՆՀ- 170 -Ա հրամանագրի

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ջ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ
 ԱՌԸՆԹԵՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
 ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ (խորհրդի նախագահ, համաձայնությամբ)
Դավիթ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Հրայր ԹՈՎՄԱՍՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար (համաձայնությամբ)
Գևորգ ԿՈՍՏԱՆՅԱՆ	Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ (համաձայնությամբ)
Հրայր ՂՈՒԿԱՍՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Նախագահի օգնական
Սիրանուշ ՍԱՀԱԿՅԱՆ	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ)
Գրիգոր ՄՈՒՐԱԴՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ	«Հայաստանի Հանրապետության իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)

Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ

«Սահմանադրական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության խորհրդի նախագահ (համաձայնությամբ)

Վարդան ՊՈՂՈՍՅԱՆ

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Հարավային Կովկասում իրավական և դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» ծրագրի ղեկավար Հայաստանում (համաձայնությամբ)

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 3
 ՀՀ Նախագահի
 2016թ. փետրվարի 10 -ի
 ՆՀ- 170 -Ա հրամանագրի

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌՈՆԹԵՐ
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԱԿՑՈՂ
 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովմանն աջակցող մասնագիտական խորհրդակցական խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) խնդիրները, գործառույթները և գործունեության կազմակերպման հիմունքները:

2. Խորհրդի նախագահը և անդամները խորհրդի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

3. Խորհուրդը գործում է մինչև 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բոլոր դրույթների ուժի մեջ մտնելը:

2. ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Խորհուրդը Սահմանադրության փոփոխություններով պայմանավորված՝ ընդունման, փոփոխման և լրացման ենթակա օրենքների շրջանակի հստակեցման, դրանց մշակման և ընդունման գործընթացում իրավասու պետական մարմիններին ցուցաբերում է մասնագիտական խորհրդատվական աջակցություն:

5. Խորհուրդը՝

1) իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ մասնագիտական պարզաբանումներ է տալիս Սահմանադրության փոփոխությունների, ներառյալ՝ դրանցով նախատեսված պետական մարմինների ձևավորման կարգերի վերաբերյալ:

2) իրավասու պետական մարմիններին ներկայացնում է առաջարկություններ Սահմանադրության փոփոխություններով պայմանավորված՝ ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների շրջանակի վերաբերյալ, իսկ իրավասու պետական մարմինների նախաձեռնությամբ համապատասխան նախագծերի կապակցությամբ տրամադրում է մասնագիտական խորհրդատվություն:

3) Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացնում է հաղորդումներ՝ խորհրդի գործունեության վերաբերյալ:

4) իր աշխատանքներում կարող է ներգրավել մասնագետների, ստանալ մասնագիտական կարծիքներ.

5) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և պաշտոնատար անձանցից կարող է հայցել իր գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվություն.

6) հաստատում է իր նիստերի օրակարգը:

3. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Խորհրդի գործունեությունը համակարգում է խորհրդի նախագահը, ով չի կարող լինել նախապատրաստվող որևէ իրավական ակտի նախագծի հեղինակ կամ համահեղինակ:

7. Խորհրդի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

8. Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

9. Խորհրդի նիստերը գումարվում են խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ:

10. Խորհրդի նիստը վարում է խորհրդի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ խորհրդի անդամներից մեկը:

11. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե ներկա է խորհրդի անդամների կեսից ավելին:

12. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրումն ապահովում է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմը (այսուհետ՝ աշխատակազմ): Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և աշխատակազմի՝ նիստն արձանագրող ներկայացուցիչը:

13. Խորհրդի առաջարկությունները, մասնագիտական պարզաբանումները և մասնագիտական խորհրդատվությունը տրվում են խորհրդատվական եզրակացությունների տեսքով: Խորհրդատվական եզրակացություններն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Խորհրդի խորհրդատվական եզրակացությունները ներառվում են նիստի արձանագրության մեջ:

14. Եթե խորհրդի որևէ անդամ խորհրդի խորհրդատվական եզրակացության վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա այն գրավոր կցվում է նիստի արձանագրությանը:

15. Խորհրդի հրավերով խորհրդի նիստին կարող են ներկա գտնվել այլ անձինք:

16. Խորհրդի բնականոն գործունեությունն ապահովում է աշխատակազմը: